# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հունվարի 23-ից փետրվարի 27-ը ժամանակահատվածում իրականացվեց նախագծային աշխատանք VII դասարանում Համաշխարհային պատմություն առարկայից: Թեման՝ Հին աշխարհի հրաշալիքներ: Նպատակը՝ առավել լայն գիտելիքների դրսևորումով ձևավորել արժեքներ և դիրքորոշում՝ պատկերացում տալով հին աշխարհի մշակութային ձեռքբերումների, հատկապես ճարտարապետության բնագավառում մարդկության գրանցած հաջողությունների մասին: Ինչպես նաև , ձևավորել թիմային աշխատանքի հմտություն, զարգացնել աշակերտների հետազոտական կարողությունները

Պլանավորված աշխատանքն իրականացնելու համար աշակերտներին տրվել է ազատ հնարավորություն՝ տարբեր հետազոտություններ կատարելու համար, նրանք աշխատել են թե՛ խմբերով և թե՛ անհատապես:

Որպես զարգացնող ուսումնական ձև՝ յոթերորդցիների նախագծային աշխատանքը հրապարակային պաշտպանություն ունեցավ՝ պրեզենտացիա, որն իր մեջ ներառեց ներածական խոսք, տեղեկատվություն, սահիկաշար, պաստառներ : Աշխատանքի ընթացքում բացահայտվել է սովորողների ջանասիրությունը նյութերի հավաքագրման, համատեղման և մատուցման գործընթացում: Նախագիծն իրականացնելիս խմբի յուրաքանչյուր մասնակից իր կարծիքն ու տեսակետն է հայտնել աշխատանքի որակի վերաբերյալ, և դա հաշվի է առնվել: Աշակերտները աչքի են ընկել պաստառների և նկարների ձևավորման ինքնուրույն մտահղացումներով, հմտորեն օգտվել են համացանցից, պատրաստել են տեսանյութ և սահիկաշար:

Նախագծի վերնագիրը, հիմնախնդիրը, ներածական խոսքը, գլխավոր մասն ու վերջաբանը լիովին համապատասխանության մեջ են: Սովորողները, նպատակային ուսումնական գործընթաց կազմակերպելով, հանդես եկան որպես լիարժեք գործող անձ՝ ինքնուրույնաբար նպատակ դնելով և ստեղծագործաբար դրան հասնելով:

Սովորողները կատարեցին լրացուցիչ աշխատանք,որոշակի ուսումնասիրություններ իրականացվեցին նաև արդի աշխարհի հրաշալիքների վերաբերյալ, հավաքագրված նյութի հիման վրա ևս կազմվեց պաստառ ու սահիկաշար:

Վերջնարդյունքում սովորողները կարողացան ազատ և անկաշկանդ ներկայացնել հանձնարարված նյութի ամբողջական պատկերը , պատրաստեցին պաստառներ և սահիկաշարեր, արժևորեցին համաշխարհային մշակույթի ձեռքբերումները: